**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 23.11.2022թ. կնքված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/2 գնման պայմանագրում 05.05.2026թ. կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 02.04.2026թ. N 435-Ն որոշում |
| Փոփոխության նկարագրություն | Ֆինանսական միջոցների հատկացում: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 8.5 և 8.14 կետեր: |

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 10**
**23.11.2022թ. կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/2 գնման պայմանագրի**

ք. Երևան 05.05. 2026թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱԳԱԹ 777» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ա. Ստեփանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 02.04.2026թ. N 435-Ն որոշումը և **ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների** կատարման համար Կողմերի միջև 23.11.2022թ. կնքված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի 2026 թվականի վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

**2. Այլ պայմաններ**

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և Համաձայնագրի հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հանելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011047215
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

_____________ Վ. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**
«ԱԳԱԹ 777» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի փակուղի 4
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150000285850100
ՀՎՀՀ 01807983

Տնօրեն

_____________ Ա. Ստեփանյան
(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված*
*23.11.2022թ. կնքված*
*N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/2 գնման պայմանագրի*
*05. 05. 2026թ. կնքված N 10 համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Մինչև 2025թ. վճարված գումար | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 1 | 45221142/24 | ՀՀ Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքներ | 834 503 529 | - | - | - | 51 729 900 | 51 729 900 | 51 729 900 | 51 729 900 | 51 729 900 | 51 729 900 | 51 729 900 | 51 729 900 | 51 729 900 | **51 729 900** |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011047215
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝
_______________ Վ. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**
«ԱԳԱԹ 777» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի փակուղի 4
«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1150000285850100
ՀՎՀՀ 01807983
Տնօրեն՝
_______________ Ա. Ստեփանյան
(ստորագրություն)
Կ.Տ

29 ապրիլի 2026թ.

Թիվ 06/1- 1060

# Թիվ 22 09 40 102801/51 ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔԻ ՊԱՅՄԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

*(թիվ 22 09 40 102801/51 պայմանագրի ապահովման երաշխիքի հավելված)*

Սույնով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) դիմումի հիման վրա 21/01/2025թ.-ին հօգուտ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի տրամադրված թիվ 22 09 40 102801/51 բանկային երաշխիքի 5-րդ պարբերությունը շարադրում է հետևյալ կերպ.

- «5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև 30 հունիսի 2028թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:»:

Թիվ 22 09 40 102801/51 բանկային երաշխիքի մյուս բոլոր պայմանները մնում են անփոփոխ:

**Կորպորատիվ հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման բաժնի պետ** **Հ. Շախաթունյան**

*Կատարող՝*
*Մանե Եգանյան*
*Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 7089)*

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ | "ACBA BANK" OJSC
Կենտրոնական գրասենյակ
Head Office
+374 10 31 88 88
acba@acba.am
www.acba.am
ՀՀ, Երևան, 0002, Արամի 82-84
82-84 Aram st., Yerevan, 0002, RA

BANK AMIO

N 2296-02

«29» 04 2026

Բենեֆիցիար՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի օգտին՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի հետ 23.11.2022թ. կնքված թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/2 պայմանագրով «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի ստանձնած պարտավորությունների ապահովման նպատակով, «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից 01.03.2024թ.-ին թողարկված է 63,312,752.00 (վաթսուներեք միլիոն երեք հարյուր տասներկու հազար յոթ հարյուր հիսուներկու) ՀՀ դրամ գումարի չափով թիվ 1616-02 կատարման բանկային երաշխիքի գործողության ժամկետը համարում ենք երկարաձգված մինչև 30.06.2028թ. (երեսունը հունիսի երկու հազար քսանութ թվական) ներառյալ։

Հետգործառնական ծառայության ղեկավար՝ Վ. Սարգսյան

30 ապրիլի 2026թ.

Թիվ 06/1- 1074

# ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
# ԹԻՎ 22 09 40 102801/124

*(պայմանագրի ապահովում)*

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև թիվ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/2» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 2.290.000 (երկու միլիոն երկու հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև 30 հունիսի 2028թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/2» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ ՀՀՀԿ բաժնի պետ — Հ. Շախաթունյան

*Կատարող՝*
*Մանե Եզանյան*
*Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 7089)*

30 ապրիլի 2026թ.

Թիվ 06/1- 1073

# ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
# ԹԻՎ 22 09 40 102801/123

*(որակավորման ապահովում)*

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից թիվ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/2» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԱԳԱԹ-777» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից թիվ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/2» պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 15.520.000 (տասնհինգ միլիոն հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև 30 հունիսի 2027թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-22/2» ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,
2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կորպորատիվ ՀՀՀԿ բաժնի պետ Հ. Շախաթունյան

*Կատարող՝*
*Մանե Եգանյան*
*Հեռ.՝ 010 31-88-88 (ներքին՝ 7089)*

## Armenuhi Manucharyan

**From:** AMIO BANK <info@amiobank.am>
**Sent:** Thursday, April 30, 2026 9:17 AM
**To:** a.manucharyan@minurban.am
**Subject:** ԱԳԱԹ-777 ՍՊԸ
**Attachments:** Նամակ երկարաձգում 29.04.2026թ..pdf

Հարգելի գործընկերներ,

Կից ուղարկում ենք Ձեզ ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ կողմից 29.04.2026թ. թիվ 2296-02 ելից համարով երկարաձգված Բանկային երաշխիքը:

Անի Գրիգորյան
Կորպորատիվ և ՓՄՁ Բիզնեսի Կենտրոն
Կորպորատիվ բիզնեսի վերլուծության և սպասարկման ծառայության գլխավոր մասնագետ
Ք. Երևան, Նալբանդյան 48
Հեռ. +374 10 59 20 20
Ներքին հեռ. 00188

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. Սույն հաղորդագրությունը և դրա կից նյութերը կարող են պարունակել գաղտնի տեղեկատվություն և նախատեսված են բացառապես հասցեատիրոջ(ների) համար: Եթե դուք չեք հանդիսանում նախատեսված ստացողը, խնդրում ենք անմիջապես տեղեկացնել ուղարկողին և ջնջել հաղորդագրությունը:

Մտածեք նախքան տպելը, չէ՞ որ փոքր սովորությունները կարող են լինել մեծ փոփոխությունների հիմքը:

**Ani Grigoryan**
Corporate and SME Business Center
Corporate banking analysis and service senior specialist
48 Nalbandyan St, Yerevan 0010
+374 10 59 20 20
Internal ext.: 00188

NOTICE: This communication and any attachments may contain confidential information and are intended solely for the use of the intended recipient(s). If you are not the intended recipient, please notify the sender immediately and delete this communication.

**Think before you print. Small actions can make a big difference.**

## Armenuhi Manucharyan

**From:** Tender5 <tender5@minurban.am>
**Sent:** Thursday, April 30, 2026 3:30 PM
**To:** 'Armenuhi Manucharyan'
**Subject:** FW: Բանկային երաշխիքի նամակ
**Attachments:** 1060.pdf

**From:** Seda Harutyunyan [mailto:Seda.Harutyunyan@acba.am]
**Sent:** Thursday, April 30, 2026 12:45 PM
**To:** tender5@minurban.am
**Subject:** Բանկային երաշխիքի նամակ

**Seda Harutyunyan**
Corporate Finance Support Specialist (Corporate Finance Support Team), Corporate Client Relationship Management Division
Corporate Business Department
Head Office | 82-84 Aram str., 0002 Yerevan, RA
Office +374 10 31 88 88
seda.harutyunyan@acba.am
www.acba.am

*Սա Ակբան է: Իմ, քո, մեր Վստահության շրջանը:*
***This is Acba. My, your, our Circle of Trust.***

*Խնդրում ենք պահպանել բնությունը և տպել այս նամակը խիստ անհրաժեշտության դեպքում:*
*Please consider the environment and do not print this email.*

This email and its attachments are only for the intended recipient. If you received this by mistake, please notify the sender and delete it. Sharing or using this info is not allowed. Acba bank is not responsible for the security of this message.

## Armenuhi Manucharyan

**From:** Seda Harutyunyan <Seda.Harutyunyan@acba.am>
**Sent:** Thursday, April 30, 2026 4:04 PM
**To:** a.manucharyan@minurban.am
**Subject:** Բանկային երաշխիքի նամակներ
**Attachments:** 1073.pdf; 1074.pdf


**Seda Harutyunyan**
Corporate Finance Support Specialist (Corporate Finance Support Team), Corporate Client Relationship Management Division
Corporate Business Department
Head Office | 82-84 Aram str., 0002 Yerevan, RA
Office +374 10 31 88 88
seda.harutyunyan@acba.am
www.acba.am



YEARS OF IMPACT BANKING

*Սա Ակբան է: Իմ, քո, մեր Վստահության շրջանը:*
***This is Acba. My, your, our Circle of Trust.***

*Խնդրում ենք պահպանել բնությունը և տպել այս նամակը խիստ անհրաժեշտության դեպքում:*
*Please consider the environment and do not print this email.*

This email and its attachments are only for the intended recipient. If you received this by mistake, please notify the sender and delete it. Sharing or using this info is not allowed. Acba bank is not responsible for the security of this message.